

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/1

23 հունիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Անուշ Կիրակոսյանի 07.05.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 27.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշման դեմ:

**Քաղաքացի Անուշ Կիրակոսյանի բողոքում բերված փաստարկները.**

Երևան քաղաքի Կենտրոնի հարկային տեսչության գլխավոր մասնագետ Ա.Հարությունյանի կողմից 2015 թ-ի ապրիլի 10-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 660 արձանագրությունն այն մասին, որ իբր Անուշ Կիրակոսյանի (այսուհետ նաև բողոքաբեր) կողմից Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների մատուցման գործարքների դիմաց դրամական /փողային/ վճարումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը չի կատարվել /ինչի համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարգարիտա Հովհաննիսյանի հայտարարությունը և ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության տրամադրած նյութերը/ և, որ արարքը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի /Այսուհետ՝ ՎԻՎ ՀՀ օր-ի/ 165 հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:

Նշված արձանագրությունը հիմք ընդունելով, Կենտրոնի հարկային տեսչության պետի կողմից 2015 թ-ի ապրիլի 27-ին կազմվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշումը:

Որոշմամբ իբր պարզվել է, որ Անուշ Կիրակոսյանը Երևան քաղաքի Չաքյան փողոցի 8 շենքի թիվ 33 բնակարանը վարձակալության է հանձնել Գևորգ Պողոսյանին և նրա կնոջը՝ Մարգարիտա Հովհաննիսյանին և նրանցից, որպես ամսական վարձավճար, 2013–2014 թ.թ. ընթացքում, 10 ամսվա համար ստացել է 650 /վեց հարյուր հիսուն/ ԱՄՆ դոլար: Արդյունքում ՎԻՎ ՀՀ օր-ի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն Անուշ Կիրակոսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տուգանքի յուրաքանչյուր դեպքի համար հաշվարկված տուգանքի գումարի /2.000.000 դրամ/ բազմապատիկի չափով՝ 20.000.000/ քսան միլիոն/ դրամ:

Բողոքաբերը գտնում է, որ կայացված որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և պետք է անվավեր ճանաչել /«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին և 2-րդ կետեր/ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ վարույթում առկա, այսպես կոչված բնակելի տարածության վարձակալության 19.01,2013 թ-ի պայմանագիրը կեղծ փաստաթուղթ է, որը ներկայացվել է Մարգարիտա Հովհաննիսյանի կողմից, ում հետ բողոքաբերը և իր ամուսինը լուրջ խնդիրներ ունեն: Նրանք բնակարանից գույքի գողություն են կատարել, ինչի վերաբերյալ առկա է հարուցված քրեական գործ, ուստի վերջիններս գույքային վնաս պատճառելու շահագրգռվածություն ունեն:

Բացի այդ, բողոքաբերի ամուսինը՝ Մելքոն Ալեքսանը, առողջական լուրջ խնդիրներ ունի և այդ ժամանակահատվածում բազմիցս ստացիոնար բժշկական օգնություն է ստացել տարբեր բժշկական հաստատություններում ու տարբեր բարդության վիրահատություններ է տարել ու նման պայմանագիր երբևէ չի ստորագրել:

Ավելին, ներկայացված բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը իրավաբանական որևէ արժեք չունի, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 654 հոդվածի համաձայն, շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 655 հոդվածի համաձայն, շենքի կամ շինության վարձակալության պայմանագրից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302 հոդվածի 1-ին կետի համաձայն, գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածի 1-ին կետի համաձայն, անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ:

Այսինքն, վարույթում առկա վարձակալության պայմանագիրը առոչինչ գործարք է /եթե նույնիսկ ընդունենք, որ այն կնքվել է կողմերի կողմից/ և որևէ իրավաբանական հետևանք չի առաջացնում:

Ավելին, վարույթում առկա որևէ գրավոր փաստաթուղթով /բացառությամբ Մարգարիտա Հովհաննիսյանի բացատրությունից, ինչի վերաբերյալ դիրքորոշումն արդեն իսկ հայտնվել է/ չի ապացուցվել, որ բնակարանի վարձավճարի գումարն բողոքաբերին հանձնվել է ԱՄՆ դոլարի տեսքով: Բողոքաբերը նշել է իր բացատրության մեջ, որ գումարն իրեն տրամադրվել է ՀՀ դրամով:

Բողոքարկվող վարչական ակտում հիմնավորված է համարվել բողոքաբերի կողմից ՎԻՎ ՀՀ օր-ի 165 հոդվածի 1-ին կետով նախատեսված արարքը կատարելու հանգամանքը, մինչդեռ նշված իրավանորմի հիպոթեզում հստակ նշված է. «Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաև այդ գործարքների դիմաց դրամական /փողային/ վճարումները Հայաստանի Հանրապետության դրամով իրականացնելու պահանջը չկատարելը՝ առաջացնում է ...»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Մինչդեռ, եթե ընդունենք նույնիսկ, որ կողմերի միջև ստորագրվել է բնակելի տարածության վարձակալության պայմանագիր, ապա այն ոչ միայն առոչինչ գործարք է, այլ նաև՝ ՎԻՎ ՀՀ օր-ի 165 հոդվածի 1-ին կետի հիպոթեզում նշված՝ ապրանքների իրացման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման տրամաբանության մեջ չի տեղավորվում:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63, 64, 75 հոդվածներով, 76 և 77 հոդվածների 1-ին մասերով, բողոքաբերը խնդրում է Կենտրոնի հարկային տեսչության պետի 27.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշումն անվավեր ճանաչել կամ բավարարել բողոքն ամբողջությամբ՝ ընդունել նոր վարչական ակտ կամ հանձնարարել ստորադաս վարչական մարմնին՝ ընդունելու նոր վարչական ակտ:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Մելքոն Ալեքսանի (Վարձատու) և Մարգարիտա Հովհաննիսյանի (Վարձակալ) միջև 19.01.2013 թ-ին կնքվել է «Բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր» (այսուհետ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն, Վարձատուն տրամադրել է Վարձակալին ք.Երևան, Զաքիյան 8, բն. 33 հասցեում գտնվող բնակելի տարածությունը:

Պայմանագրի 5.1 կետի համաձայն, պայմանագիրը կնքվել է 1 տարի ժամկետով:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն, բնակելի տարածությունը վարձակալության է հանձնվել 650 ԱՄՆ դոլար գումարով՝ յուրաքանչյուր ամսվա դիմաց:

Սույն գործում առկա է Մարգարիտա Հովհաննիսյանի 27.08.2014 թ-ի հայտարարությունը, որում Մ.Հովհաննիսյանը մասնավորապես նշել է, որ Պայմանագիրը կնքել է Մելքոն Ալեքսանի հետ, սակայն հիմնականում գումարը փոխանցել է նրա կնոջը՝ Անուշ Կիրակոսյանին: Մ.Հովհաննիսյանը նշել է նաև, որ նախ վճարել է բեի 100 ԱՄՆ դոլար, այնուհետև դեպոզիտ 1200 ԱՄՆ դոլար առաջին և վերջին ամիսների համար, ինչպես նաև, որ բնակարանը վարձակալվել է մինչև 2014 թ-ի փետրվար ամիսը և յուրաքանչյուր ամսվա համար վճարվել է 650 ԱՄՆ դոլար:

Իր հերթին, 01.12.2014 թ-ին հայտարարություն է տվել նաև Անուշ Կիրակոսյանը, որում վերջինս մասնավորապես նշել է, որ վերոգրյալ հասցեում գտնվող բնակարանը վարձակալության է տրվել 650 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով և պարտավորվում է Կենտրոնի ՀՏ ներկայացնել եկամտային հարկի հաշվետվություն և վճարել հարկային պարտավորությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական հանգամանքները ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ում հարուցված վարչական վարույթի արդյունքում ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից 27.04.2015 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով քաղաքացի Անուշ Կիրակոսյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000.000 դրամի չափով: Որոշմամբ մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունից 23.02.2015 թ-ի թիվ տ-652/13-1 գրությամբ ստացված նյութերի համաձայն քաղաքացի Անուշ Կիրակոսյանը ք.Երևան, Զաքիյան 8 շենք 33 բնակարանը վարձակալության հանձնված Գևորգ Պողոսյանից և նրա կնոջից՝ Մարգարիտա Հովհաննիսյանից, որպես ամսական վարձավճար 2013-2014 թ.թ. ընթացքում 10 ամսվա համար ստացել է 650 ԱՄՆ դոլար, խախտելով «Արժույթային

կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը: Որոշման համաձայն, նման եզրակացության համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Պայմանագրում նշված է ԱՄՆ դոլարով վարձավճարը վճարելու պարտավորության մասին, ինչպես նաև քաղաքացի Մարգարիտա Հավհաննիսյանի հայտարարության համաձայն Անուշ Կիրակոսյանը վարձավճարը ստացել է ԱՄՆ դոլարով: Արդյունքում պարզվել է, որ Անուշ Կիրակոսյանը թույլ է տվել խախտում, որը որակվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և առաջացնում է պատասխանատվություն յուրաքանչյուր դեպքի համար (յուրաքանչյուր դեպք է համարվում գույքի վարձակալության ամիսների քանակը՝ 10 ամիս), իսկ յուրաքանչյուր դեպքի գումարը կազմում է 2.000.000 դրամ:

Որոշմամբ քաղաքացի Անուշ Կիրակոսյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ յուրաքանչյուր դեպքի (10 ամիս) և յուրաքանչյուր դեպքի համար հաշվարկված տուգանքի գումարի (2.000.000 դրամ) բազմապատիկի չափով՝ գումարով 20.000.000 դրամ:

Սույն գործում առկա ապացույցների և փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 27.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ:

Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Անուշ Կիրակոսյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել ք.Երևան, Զաքյան 8 շենք 33 բնակարանը վարձակալության հանձնված Գևորգ Պողոսյանից և նրա կնոջից՝ Մարգարիտա Հովհաննիսյանից, 2013-2014 թ.թ. ընթացքում (10 ամսվա համար) որպես ամսական վարձավճար 650 ԱՄՆ դոլար ստանալու համար: Ընդ որում, գործում առկա ապացույցների համաձայն վերոգրյալ բնակարանը վարձակալվել է մինչև 2014 թ-ի փետրված ամիսը և բնակարանի վարձակալության դիմաց վճարումները կատարվել են յուրաքանչյուր ամիս: Այսինքն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը Անուշ Կիրակոսյանի կողմից կատարվել է 2013 թ-ի հունվարից մինչև 2014 թ-ի փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում, սակայն այդ իրավախախտման համար պատասխանատվության է ենթարկվել (վարչական տույժը նշանակվել է) միայն 27.04.2015 թ-ին՝ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիսը լրանալուց հետո ընկած ժամանակահատվածում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քաղաքացի Անուշ Կիրակոսյանի 07.05.2015 թ-ի բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ռ ը ռ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 27.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283910 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

